

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ

1900 թ.

Ա. ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՀԱԼՈՒԹՅՈՒՆ

Ա.

ԿԱՆՈՆՔ Ա. ԺՈՂՈՎՈՅ

ԳՈՐԾ ԱՐԻՍՏԱԿԵՑ ԱՐՔԵՊԻՍ. ԴԱՏԹԵԱՆԻ

1—16 եր. (շաբանակելի)

Բ.

ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏԸ

ՎԼ. ԿԱՐԱԼԵԿՆԿՈՒ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՏԵ ՎԱՐԴԱՊԵՏԻ

1—48 եր. (շաբանակելի),

Կ Ա Ն Ո Ն Գ

Ս. ՀՈՂՈՎՈՑ ԵՒ Ս. ՀԱՐՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ.

Ա.

ՀԵՂԻ- ԹԵՒՔ
ՆԱԿՔԵԼ ԸՆԴ-
ԹԵՒՔ ՀԱ-
ԿԱՆՆ- ՆՈՒ-
ՆԱԳ ԼԱՆ.

ՅԱՂԱԳՍ ԱՂ.ՕԹԵԼՈՑ, ԵՒ ԸՆԴ ԱՐԵԽԵԼՈ
ԱՂ.ՕԹԵԼՈՑ:

Առաւ-
բերոց Կարգեցին Առաքեալք և եղին հաստատու-
ա թեամբ, թէ յորժամ յաղօթս կան՝ և երկրպագաննեն
Աստուածութեանն, ընդ արևելս կացցեն. ըստ այնմ
զոր ասաց Փրկիչն թէ՝ «որպէս փայլակն փայլատա-
կեալ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, նոյնպէս
եղիցի գալուստ Որդւոյ մարդոյ»: Զի արեգակն ար-
դարութեան Քրիստոս որդի Աստուծոյ՝ յարևելից
ծագեացէ և արասցէ փրկութիւն ի մէջ երկրի: Եւ
այսու գիտացուք թէ՝ յարևելս կոյս արժան է յա-
դօթս կալ, և երկիրպագանել արքային անմահի:

Զամենայն զմտեալսն յեկեղեցի՝ զհաւատացեալ-
սըն, և գրոց լուեալս, ոչ մնացեալս աղօթից սրբոց
հաղորդութեանն՝ իբրև զանկարգութիւնս արարեալ,
յեկեղեցւոյ ՚ի բաց որոշեացի:

Ժ իսդ Նթէ ոք ընդ անհաղորդին, թէ և ի տան՝ ա-
ղօթակից լիցի, ՚ի բաց որոշեացի:
Ժա իսե Նթէ ոք լուծեալ ՚ի քահանայութենէ, այլ ոք
քահանայ աղօթակից լիցի՝ իբրև ընդ քահանայի,
լուծցի:

Իսդ Հէ Նպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ՝ թե-
րահաւատից միայն աղօթակից լեալ, որոշեացին.
ապա թէն նոցա հրամայեսցին իբրև քահանայից՝
աղօթել, լուծցին:

Կ դդ Նթէ ոք ժառանդաւոր կամ ժողովրդական մտցէ
՚ի ժողովարանս Հրէցից կամ թերահաւատից՝ աղօ-
թել, լուծցի:

Ենելոյ Զի են ոմանք որ ՚ի կիւրակէի ծունը դնեն,
Ե ճկպ կամ յաւուրսն մինչև ցՊէնտէկոստէ, կամ եղին, զի
սմենեցուն՝ յամենայն իշխանութեան, միաբան ար-

Ժան է պահել զկարդ, զոր ինչ եղ սուրբ ժողովն,
զի յոտն կալով զաղօթս մատուցեն Տեառն ամե-
ք. նայն երկրի:

ի ճաղ Ոչ է պարտ ՚ի կիւրակէի յաղօթսն ծունը կրկ-
նել, և ոչ յաւուրս Պէնտէկոստէից:

կ միզ Ոչ է պարտ ընդ հերետիկոսս ճաշակել կամ
աղօթել կամ օրհնութիւն առնուլ ՚ի նոցանէ:

կա միէ Եթէ ոք առ հրեշտակս կամ առ այլ ոք յարա-
բածոց՝ յաղօթս կացցէ, նզովեալ եղիցի:

դգ մծթ Պարտ է զնոյն պաշտօն աղօթից՝ յամենայն
ժողովս լինել:

դդ մկ Պարտ է զկնի վարդապետութեան երախայի՝
յաղօթս լինել:

Անտիոք Ամեննեքին ով և մտանիցեն յեկեղեցի Աստու-

բ յկզ ծոյ, և յետ ունկն զնից սուրբ գրոց՝ ոչ հաւասա-
րեցին առ ետեղ աղօթից հասարակաց ժողովը-
գեանն, և զդէմս դարձուցեալ ՚ի սրբութենէն ըն-
դունելութեան գովութեան, ըստ իրաց ինչ ստահա-
կութեան և յանդգնութեան, ընդ ոտն հարկանի-
ցեն, զայնպիսիսն մերժել և ընկենուլ արժան է ՚ի
սուրբ եկեղեցւոյ. մինչև խոստովան լինել և ցուցա-
նել ամենայն աշխատութեամբ և տառապանօք զա-
պաշխարութիւն իւրեանց, և աղաչեսցեն թերևս՝
այսպէս արժանի լիցին ընդունելութեան: Խրբ ոչ
լիցէ նոցա մարթ՝ հաւասարիլ այնոցիկ՝ որ ազատեալ
են ՚ի կապանաց եկեղեցւոյ, և որ ընդ եկեղեցնաւն
լիցեն, և ոչ ՚ի տունս ուրեք զատ՝ ընդ այնպիսիսն
մարթ լիցէ յաղօթս կալ՝ որ մերժեալ լիցեն յեկեղեց-
ւոյն. և ոչ ՚ի ժողով կամ յեշխանութիւն այլոյ եկե-
ղեցւոյ արժան է մարձեցուցանել զայնպիսիսն: Ապա
եթէ երեսնոցի կամ գտցի ոք յեպիսկոպոսաց, յերի-
ցանց, կամ ՚ի սարկաւագաց և կամ ոք և լիցէ
յաստիճանէ՝ և անհաւասարացն հաւասարեաց, զայն-
պիսիսն՝ ընդ նոսին արժան է մերժել և կապել, զի
պատճառք եղեն խանգարման կանոնաց եկեղեց-
ւոյ և զմիմեանն հարկանելոյ:

Լաւող. Զի զնոյն ՚նքն զպաշտօն աղօթից, յամենայն
ժը նէ ժամ՝ և յերեկորին արժան է կատարել:

ժթ ճը Արժան է ուրոյն՝ յետ թարգմանութիւն առ-
նելոյ եպիսկոպոսացն, նախ՝ յերախայից վերայ ա-
ղօթս առնել, և յետ ելանելոյն երախայից, ապա ա-
պաշխարողաց աղօթս առնել, և յետ սոցա՝ ի ձեռն
խոնարհելոյն զօրհնութիւնս ընդունելոյ և արտաքս
գնալոյ. և այսպէս ՚ի վերայ հաւատացելոցն աղօթս

առնել երիցս, զմին՝ լոռվթեամբ, և զերկրորդն է զերրորդն քարողութեամբ կատարել. ապա այսպէս՝ զողջոյնն տալ երիցանց և եպիսկոպոսաց, ապա աշխարհականք միմեանց. և ապա պատարագն կատարեացի, իրբւ միայն քահանայիցն արժան է և յորաստիճանին, և ոչ եթէ կէս սարկաւագաց, թէ սաղմոսողաց 'ի բեմ ելանել, և 'ի սեղանոյն օրէնս առնուլ:

լւ նիր Զէ մարթ ընդ այլազգիս կամ ընդ հերձուածողս յաղօթս կալ:

թառ-
զէսուկ Դարձեալ ասէ առաքեալ, յորժամ'ի մի վայր
առաք. ժողովեսցին հաւատացեալք՝ յաղօթսն 'ի Տան Աստուծոյ զայլ ինչ մի խօսեացին, բայց միայն զաղօթսն, մի քրթմնջեսցեն ընդ միմեանս, այլ կացցեն ընդ արևելս՝ ձեռու 'ի վեր ամբարձցեն, ինդրելով զարդարանալն, և արքայութեան արժանի լինել. և քարեացն՝ որ անդն է պատրաստեալ՝ արժանանալ:

Փելտու. Ամենայն այր կին և կամ մանկունք դատարկացեալք 'ի գործոյ, և յայգույն և յերեկոյն խափանեսցեն զաղօթսն՝ ոչ գնալով յեկեղեցի ունկն դնել սահմանեալ կարգացն, նզովեալ է:
թ լէ Եթէ ոք ողջ իցէ մարմնով, և անփոյթ արասի ոկտ ցէ զաղօթիցն, կամ զուսումն սաղմոսաց, պատճառելով զպատճառս մեղաց՝ որոշեսցի, կամ շաբաթմի պահեսցէ:

Կաեմ. Սահմանք և հաստատութիւնք եկեղեցւոյ
Հաւեպ. զՔրիստոսական Խաչն և զսրբասացութիւնն զօր
Ա. հանապազ կատարեմք յաղօթս մեր, այսպէս, սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ, Եւ ընդէ՛ր երեքին,
Լ ոձա զոր օրինակ ժամանեալ ոք արքայութեան նորա և երիցս երանեան, այսպէս և մեք երիցս ասեմք երեքին, սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ:

Ցողէ. Արժան է 'ի շաբաթու երեկոյեան՝ մարտիրոսին.
իմաստ. սաց պաշտել, և ծունը չկրկնել, և զճրագացն օրհնութիւն ասել, և ոյս զուարթ սուրբք:

Ժը ոմա Արժան է գիշերապաշտօն առնել յայդ կիւրակէի, և հոկմամբ, արտասւօք և ոտնկաց տքնութեամբ, զանցեալ շաբաթուն աւուր զյանցանսն ջնջել, և արժանաւոր առնել զինքն մեղսաքաւիչ և կենդանարար խորհրդոյն, և ակն ունել ամենայն զուարթութեամբ

և փութով Տեառնագալուստ փողոյն՝ և անձառ յաւ-
լիտենական արքայութեանն:

Յովհ. Այլ և յաւուր կիւրակէի և 'ի զատկէն մինչեւ
Մանդ. ցՊէնտէկոստէ՝ ծունը կրկնել ոչ հրամայնսցին, այլ
գ ոյժը աղօթս կալ:

Ե ոյի Ի զատկէն մինչև ցՊէնտէկոստէն, ամենայն
աւուրք՝ որպէս կիւրակէ են՝ ծունը ոչ հրամայի դը-
նել, այլ յոտն կալով երկրպագութեամբ մատուցա-
նել զաղօթս:

Բ.

ՅԱՂԱԳՍ ԱԽՈՒՐՑ ՊԱՏԱՐԱԳԻ, ԵՒ ՊԱՏՈՐԱԳԻ:

Առաջ. Կարգեցին առաքեալք և եղին հաստատու-
թեամբ, եթէ յաւուր միաշաբաթւոջ՝ յամենայն կիւ-
րակէի, եղիցի տօն, և պաշտօն, և խորհուրդ Տէ-
րունական մարմնոյ և արեան Տեառն, զոր պատ-
ուիրեաց մեզ կենարարն: Եւ հաց պատարագին՝
ի նմին աւուր ջերմ եփեալ եցէ 'ի սուրբ սեղանն,
և արժանաւորքն հաղորդեսցին, մի՛ արհամարհանօք,
այլ մեծաւ երկիւղիւ: Եւ դատարկացեալ և փափկա-
ցեալ եղիցի միաշաբաթն, որպէս պատուիրեաց Աս-
տուած՝ Նոյի, Արքահամու, և Մովիսի, զի և մեզ
հանգիստ լիցի յերկրաւոր աշխատութեանց, և յեօթ-
ներորդումն դարու՝ 'ի դալստեան Տեառն յարքա-
յութեան յալիտենից: Եւ յամենայն միաշաբաթւոջ
ընթերցցին գիրք սուրբք՝ Մարգարէականկ և Առա-
քելականք, և յաւարտաման 'ի գլուխ ամենեցուն՝
ընթերցցի Աւետարան, և մատուցի պատարագ:
Վասն զի յաւուր միաշաբաթւոջ եղիւ լինելութիւն
արարածոց, եւ յաւուր միաշաբաթւոյ՝ յարեաւ Տէ-
րըն մեր Քրիստոս 'ի մեռելոց. յաւուր միաշաբաթ-
ւոջ ծագեցաւ լոյս աշխարհի, և յաւուր միաշաբաթ-
ւոջ Պէնտէկոստէիցն երկի 'ի վախճանի աշխարհիստ
հայրական փառօք և երկնաւոր հրեշտակօք:

Կարգեցին Առաքեալք և եղին հաստատու-
թեամբ՝ թէ յաւուր շաբաթի եղիցի տօն, և պաշ-
տօն ընդ ամենայն տիեզերո, և եղիցի յիշատակ
ամենայն մարտիրոսաց, պատարագ մատուցեն 'ի
նմա քահանամք, և ուրախութեամբ սաղմոսնսցին,
վասն զի կարապետ է գալստեանն մեծի արքայի,
պարտ է ամենայն սրբոց ուրախ լինել ընդ առաջ
Քրիստոսի:

Դա լա Կարգեցին Առաքեալք և եղին հաստատութեամբ, եթէ հաց պատարագին, 'ի նմին աւուր ելցէ 'ի սեղանն, յորում աւուր եփեսցի, և մի լիցի խխանութիւն զկնի աւուրց հանել, զի և Մովսէսով ոչ պակասեցուցանելը զհացն ջերմ յերեսաց Տեառն:

Ք. Նմին, Ոչ է պարտ ի քառասնորդսն պատարագ մանե մհա տուցանել, թէպէս և մարտիրոսաց յիշատակ իցեն, բայց եթէ ի շարաթի և ի կիւրակէի:

Ճժդ մհթ Ոչ է պարտ եպիսկոպոսաց կամ երիցանց ի շինական տունս պատարագ մատուցանել.

Թագ. Դարձեալ ասէ Առաքեալն՝ զհաց պատարագին՝
առաք. յորում աւուր մատուցանիցեն զպատարագն, ի նմին աւուր եփեսցին խաչապէս դրոշմամբ, նոյնպէս և զդինին սուրբ բաժակին՝ սուրբ ամանօք հանցեն ի սուրբ սեղանն. մի ոք յանդգնեսցի խառնել ի նոյն՝ ջուր, զի չէ այն Աստուածահանոյ, այլ անագորոյն մտաց. և որ ոք առնէ զայնպիսին, չէն նա քրիստոնեայ. նզովեալ եղիցի, մինչեւ դարձցի յաղանդոյն:

Ճդ նհը Դարձեալ ասէ Առաքեալն՝ ամուսնացեալ քահանայք, յորժամ մատուցանել կամին զսուրբ պատարագն, զերիս աւուրս հրաժարեսցին ի կանանց երեանց՝ ցմատուցումն իւր, զի եթէ զհաց առաջաւորութեան ոչ ետ քահանայն՝ առանց քննելոյ և գտանելոյ զորութիւնն, որչափ եւս առաւել՝ որ զայս երկնաւոր պատարագս մատուցանեն, պարտին սուրբ լինել եւ պատրաստ, որպէս Աստուածոյ սովասաւորք. ահիւ կալ եւ դողութեամբ, զի արժանի լինիցին անմահ կենացն:

Ժդ նհթ Եթէ ոք կուսութեամբ քսհանայութիւն ընկալեալ է՝ այնպիսին տքնող լիցի, պահող յորում աւուր զսուրբ պատարագն մատուցանել կամի. պատրաստ լիցին զգիշերն ամենայն՝ տքնել սուրբ խորհուով, առանց ամենայն կեղծաւորութեան, զի ընդ Աստուծոյ ի խորհուորդ մտանէ:

Հաւող. Ոչ է արժան ի տունս պատարագ մատուցածդ ջղը նել եպիսկոպոսի կամ երիցու:

Գրդը լուս. Զէ պարտ, ուր նշխարք մարտիրոսաց դնին, ժիւ չիւ ի վերայ պատարագ մատուցանել.

Աթն. Հարց. Թէ ոք կոչեցէ զվիճակեալն ի զուգաթ մուսանութիւն անօրէնութեան, և ինքն լպրշցէ յանութիւն անութիւն անօրէնութեան, կամ քենւոյ ամուսնութեան, այսինքն քեռ կնոջն՝ յառաջագոյն եղեալ,

որ հանդերձեալ է զուգիլ, թէ պարտ է վիճակեցելոյն աղօթս առնել ի վերայ նորա, և կամ պատաքադ մատուցանել:

Պատաս.—Մի անգամ ասացի, թէ լուկցէ վիճակեալն զանօրէն ամուսնութիւն, ապա եթէ ամուսնութիւն անօրէն է, ոչ է պարտ վիճակելոյն հաղորդիլ մեղաց օտարաց:

ԺՂ շծա Հարց—Նրիանոսաց մերձ կալով, կամ այլոց հերձուածողաց, պարտ է պատարագ մատուցանել:

Պատաս.—Ոչ է պարտ զսուրբ պատարագն մատուցանել, բայց եթէ խոստովանեացին ի հերձուածոյն փախչիլ:

Մկը. Եւ որպէս մերձեացուք առ սուրբ սեղանն, Ի ոճկդ եւ կենդանարար խորհուրդ, Առ այդ անմահութեան վիճակ՝ մի ոք երկմտութեամբ, և մի թերահաւատութեամբ, եւ մի գործովիք անարժանութեան մերձ լինել յանդգնեացի. զի մի զկամս Աստուծոյ ի բարկութիւն առ ամենայն երկիր շարժեսցէ. Եւ ինքն լուկցէ զասացեալն՝ դու ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, զի ատեցեր զիսրատ իմ, այլ ուղիղ զնացիւք եւ ծշմարիտ հաւատով մատուցեալ լուսաւորեացի, եւ այլոց ինքեամբ գործեսցէ փրկութիւն.

Պ ոճկե Եւ զիարդ արժան է զխորհուրդն կատարել զփրկական մարմնոյ եւ արեանն Տեառն: Պարտ է երկիւղիւ եւ զգուշութեամբ կատարել, եւ ուղիղ դաւանել խոստովանութեամբ՝ ուրոյն ի հերձուածողացն փորձիչ խորհրդոց. զի մի արիանոսացն մերձ լինելով, բսա առաքելոյն անունն Աստուծոյ եւ ծշմարտութիւնն հայիոյեսցի:

Է ոճկդ Եւ որպիսի օրինակաւ նուէրք սրբութեան յօրինեացի: Հանել ի սեղանն զհացն սուրբ՝ ջերմ, բստ առաքելոցն աւանդութեան, եւ անսապակ առանց իրիք խառնման. զի ոչ ապականացու իւկք փրկիմք, այլ անսապական մարմնով եւ արեամբ՝ անբիծ եւ անարատ գառիննն. եւ զայս մինչեւ ի սեղանն՝ սարկաւագունք յօրինեսցեն, եւ զկատարեալն ի վերայ քահանամքն կատարեսցեն:

Ը ոճկէ Եւ զիարդ եկեսցէ ի ձեւ սեղանն՝ և խորհրդ դոյն և այլ եւս կարգ: Սեղանն քաւութեան՝ ընդ վարագուրաւն, յորում Հոգին սուրբ իջանէ, եւ Աւազանն յետոյ առ նմին տամբ՝ պատուով հաստատեալ յաջմէ, եւ ժառանգաւորք իւրաքանչիւր աստիճանաւ պաշտեսցեն, եւ ժողովրդականք արտաքոյ վարագուրին, եւ երեխայքն առ դրունսն

ունկնդրութեամբ, զի մի ընդ միմեանո ելանելով
եղծին կարգքն, այլ իւրաքանչիւր կայանիւ ա-
նարատ մնասցէ:

Ծ ոճկը Զայս աւանդեմ ձեզ պատուիրան հաւատոյ
եւ կարգաց եկեղեցւոյ, ըստ խնդրոյ աղաչանաց
ձերոց. և նզովեմք ի վերայ այսոցիկ՝ զայլաձևս
խորհեալսն, զի ի միմեանց ընկալեալ ձեռնադրու-
թեամբ չնորհս, ոչ երբէք բերեմք պակասութիւն, և
միապատիւ ոչ իրաւունս վարկանիմք զկարգեալսն
ուղղափառապէս՝ եկեղեցւոյ. և զփառամոլանձինս
կշտամբիմք՝ որ խորհին հակառակ. որպէս պատմեալ
եղեւ մեզ զծուրկիոյ, Բասենոյ և Բագրեանդայ ե-
պիսկոպոսաց, որ սակաւուք ընդ Արիանոսս միա-
ւորեալ է՝ և դարձեալ խղճեալ. և արդ, այլ ևս յան-
դդնագոյնս խորհի եպիսկոպոս՝ միայն աթոռաւ,
և ընդ Արքեպիսկոպոսին՝ ինքեամբ անձին տայ
պատիւ, զոր չէ արժան ընդունել. զի և ոչ հարքն
աւանդեցին զայսպիսի ինչ հակառակութեան՝ յեկե-
ղեցի մուծանել, և անվայելուչ է՝ համարել հաւա-
սար, մինչև կոչմամբ ի պատիւ Աթոռոյն ժամանես-
ցէ: Եւ արդ, պարտ է զայնպիսին ի հնազանդութիւն
կոչել, և եթէ ինոյնն մնասցէ՝ խորչիլ իրըև յօտարէ:

**Սահմակ
Քերչն.** Հարց.—Պարտ է ի կենդանութեան զպատա-
րագս ելից իւրոց կատարել ումեք. զհոգւոյ հանգիստ
ը ոճհզ և զիշատակ, և զմասն. թէ յետ վախճանին՝ այսո-
քիկ կատարին:

Պատաս.—Ձէ պարտ՝ նախ քան զվախճանն՝
զկատարմանն պատարագ ի կենդանութեան մատու-
ցանել. վասն զի սուրբ Առաքեալք, և յետ նոցա
սուրբ Հարք. յետ կատարածի կենացն ի հանգիստ
հոգւոց և ի թողութիւն մեղաց՝ զայսոսիկ հրամա-
յեցին կատարել

ԺԲ ոճհզ Հարց. — Ի մատունս՝ յորս սեղան հաստատեալ
է և գործն իւր ոչ զործի ի վերայ հանապազ, ոչ
բահանայ առ ընթեր, և ոչ սպասաւորութիւն, այլ
մի օր ի տարին՝ երթան պատարագ մատուցանել,
արժան է ի պատուի ունել թէ շարժել:

Պատասի.—Շարժել արժան է, զի մինչ հանա-
պազ գործն ի վերայ չկատարի, նոտ արհամարեալ է,
և ոչ է սեղան:

Յովհն. Արժան է ի սուրբ քառասնորդսն պահոց՝ յա-
կմաս. լուր շաբաթի և կիւրակէի պատարագ մատուցանել՝
զ ոճկթահիւ և երկիւղիւ ըստ սահմանելոյ սրբոց հարց
յամենայն ժողովս իւրեանց: Խակ եթէ ոք հակառա-

կեալ ընդիմասցի մերում հրամանիս՝ կամ բանիւ ոք
և կամ գործով, եթէ ուխտաւոր է լուծցի, եթէ աշ-
խարհական՝ որոշեացի:

Ը ռ.ճղա Արժան է զհացն անխմոր և զդինին անապակ
հանել ի սուրբ սեղանն. ըստ աւանդելոյ մեզ՝ սըր-
բոյն Գրիգորի, և ոչ խօնարհիլ յայլազգեաց քրիս.
տոնէից աւանդութիւնս. զի սուրբ Լուսաւորիչն
յօրինակէն բերեալ զայս առաքելաբար հրաման ետ
կատարել իւրոց վիճակելոցն, որպէս և զաղն օրհ-
նութեան՝ յագապացն զենմունսն խառնել և ըստ
կարդի զստացւոց աղքաց սեպհականել զեկեղեցւոյ
շնորհ, և մեզ ինմին պարտ է յարամալ, և ոչ թո-
ղուկ ի բաց, և չառնել նորաձեւս ինչ:

Եփեմ
կրօն. Եւ զՏէրունական՝ պատարագն ի կիւրակէի և
ը ռ.միսէ յայլ առարս անխտիր կատարեսցեն, իսկ ի չորեք-
շաբաթի և յուրբաթի ոչ:

Կաըն. Դարձեալ ի վկրայ այսր ամենայնի պատուի.
Ժողով ըանադիր աւանդութեանս, գեր քան զասացեալս
ը ռ.մէ ըանադիմք կանոնական սահմանադրութիւնս, հա-
նուրց ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ, և սպա-
սաւորաց խորհրդական սեղանոյն. զի լուսաք լուր
սարսափելի և ծանրագոյն՝ թէ ի տեղիս տեղիս ո-
մանը յառաջնորդաց եկեղեցւոյ՝ խմորեալ ի Նեստո-
րականաց և ի Քաղկեդոնականաց ապականեն զսուրբ
խորհուրդն՝ խառնմամբ ջրոյ և խմորոյ:

—Արդ յայսմհետէ, եթէ եպիսկոպոս կամ ե-
րէց գտցի, որ այսպիսի չար սովորութեամբ աւան-
դեսցեն զտուրբ խորհուրդն, լուծցին յամենայն քա-
հանայական պատոյ, և ի սուրբ ժողովոյն նղով
եղիցին: —Ապա եթէ տղիտութեամբ ոք արար, և
յետոյ զղացեալ խոստովանեսցի, ընկալցի զայնպի-
սին սուրբ եկեղեցի, Դ. ամ տպաշխարութեամբ: —
Իսկ եթէ ժողովը կանաչական ոք հաղորդեսցի տղիտու-
թեամբ այնպիսի հերձուածողական ապականեալ օ-
րինացն, արտաքոյ եկեղեցոյ ապաշխարեսցէ՝ ամս
Բ.: —Իսկ կամօք և զիտութեամբ արարօնք՝ զամս
Զ., արտաքոյ եկեղեցւոյ լիցին մեծաւ զղմամբ, և
վարդապետն հայելով ի ջերմագին արտասառսն՝
արժանաւորեսցէ խորհրդոյն, ապա թէ ոչ ապաշխա-
րեսցին և արհամարհեսցեն զպատուիրեալսն ի մէնջ՝
ի սուրբ ժողովոյն, նզովեալ եղիցին:

Ք ռ.մէր Զգուշացուցանեմք դարձեալ զեպիսկոպոսունս,
զքահանանայս, և զսարկաւագունս, զի մի լիցի հա-

մարձակութեամբ սպասաւորել որբոյ սեղանոյն, հասարակօրէն հանապազորդեան հանդերձիւ, այլ ըստ իւրաքանչիւր ասախճանի՝ զգեցցին պարեգոստ և պատմուճանս: — Նպիսկոպոսապետն — Կաթողիկոսն՝ զգեցցի ի ներքոյսն պարեգոստ սպիտակս, և ի վերայ նափորտ երկոտասան խաչիւ նկարակերտեալ և ամփոփեալ թեզանեօք՝ և Նմիփորոն, որպէս և այլոց եպիսկոպոսացն, և յաջոյ կողմանէ կոնքեռ նկարակերտ. Նմանապէս և զայլ կարգաւորութիւնս արասցէ ըստ գրելոց: — Նոյնպէս և եպիսկոպոսն զգեցցի կամար բոլորաստորոտ, սպիտակ ստորագեցեալ, և ի վերայ աղաքողոն՝ առանց թեզանեաց բոլորեալ շուրջանակաւ. և ուրար զերկոսին ուսուկք, և զսպեալ թեզանեօք, և զգօտեաւն ունելով դաստառակ խաչանման յաջմէ կողմանէ, և ի վերայ աղաքողոնին կրկնաւ խաչիւք հնդօք Նմիփորոն և կօշիկս զգեցեալ և սքօղեալ մինչև ցժամ խորհրդոյն. խակզբան ազօթիցն վերացուցեալ զծածկոյթ գլխոյն առանց սքօղելոյ կացցէ մինչև յաւարտումն խորհրդոյն: — Նոյնպէս և քահանաքը զգեցցին սպիտակ պարեգոստ ի ներքոյ և ուրար զերկոսեան ուսուկք, և ի վերայ զաղաքօղոն պիղնաւոր առանց թեզանեաց՝ և կօշիկս յոտս. բացաւ գլխով սպասաւորեցէ խորհրդոյն սրբութեան: — Եւ ոչ միայն զխորհուրդն սուրբ, այլ զամենայն քահանայագործութիւն, զձեռնազրութիւն քահանայի, և զօրհնութիւն եկեղեցւոյ, և զայլ ինչ որ յանկաւոր է՝ եպիսկոպոսաց և քահանայից, մի իշխանցեն առանց պատմուճանի կատարել: — Նոյնպէս և սարկաւագունք զգեցցին պատմուճան սպիտակ, և կացցեն ի սպասու խորանին հոլանիք, և զօտելոյնք լիցին ի ժամ պատարագին, և ուրար զահեակ ուսուկն խաչանկար, և զըշոցն հովանի կալցեն ի վերայ սեղանոյն քաւութեան: — Եւ կէպքն ի նոցանէ բուրգիառս բարձեալ ի ձեռու՝ ակումբ առեւալ զքաւութեամբն՝ մատուցեն զբուրումն անուշահոտութեան՝ մեղսաքաւիչ խորհրդոյն. և զհաց պատարագին ինքեանք կազմեսցեն սաղմոսիւք և զգուշութեամբ, և զսուրբ խորհուրդն հոնել ի սեղան, և իջուցանել և քարոզել, և յայլ ինչ մի ամեննեին համարձակիլ: — Եւ հչ հրամայեմք եպիսկոպոսի կամ քահանայի, առանց մերձակայութեան սոցա եւ սպասաւորելոյ՝ քահանայագործել:

Արդ, որք մտերիմ և երկիւղած մտօք հնա-

զանդին մերոյս սուբբ ժողովոյ կանոնադրութեան,
խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն. և
որք ստունդանեն՝ հստակով յԱստուածադիր օրի-
նագրութեանէս, լուցիկը լիցին հրոյն յաւիտենից տան-
ջանաց:

Ներու. **Մի** ոք իշխեսցէ ժամ առնել վախճանելոյ, ո.
Եղանակ. Բոյ չէ կննաց վկայ, և ոչ գոյ այլ վկայ ի միջի. զի
Գործութեան. զայս պարտ է հաստատութեամբ քննել առաջնոր-
ին ոյձո դաց եկեղեցւոյ:

Լա ոյդը Զբաժտակ խորհրդոյն ըստ բաւականին արկցէ
ի սկիհն. իսկ յորժամ սկիզբն արասցէ աղօթիցն,
ոչ է պարտ այլ խառնել, եւ զկնի կատարման խոր-
հրդոյն՝ մինչև մաքրեալ իցէ ամեննեին զսկիհն, եւ
զմատունսն, ոչ է պարտ այլ անմատոյց դինի ար-
կանել ի սկիհն ի լուացումն մատանցն. բայց լա-
ւագոյն է զի մի յայսպիսի իրս սովորեսցին. զի ա-
մլորդ է:

ԱԲ ոյդը Եթէ մասն դտանէ անկեալ ի վերայ սեղանոյն,
պարտ է ճաշակել զկնի աւարտման ժամուն. իսկ
եթէ յանմատոյց բաժակէ ճաշակեալ է՝ զդտեալն
պահեսցէ զգուշութեամբ ի վաղիւն՝ ի կատարման
պատարագին:

ՃՐ ոնժդ Ասեն ոմանք՝ թէ արև իջանէ ի վերայ նշխա-
րին և կամ որ զնշխարն յարեւ հանէ, նովառ չէ
մարթ ժամ առնել. պարտ է ժամ առնել չէ վնաս.
եւ ոչ խիղճ:

ՃԴ ոնժդ Եթէ նշխարն ի գուեհ զետին անկանի՝ չէ պարտ
այնու ժամ առնել. մանաւանդ եթէ տեսողք լինին
և գայթակին:

ՃԺՈ ոնհը Պարզած զինով՝ որ հացիւ է. կամ նշով կտմ
այլ ինչ նիւթով, ոչ է պարտ ժամ առնել, զի խառ-
նեալ է ընդ կերակրողական նիւթոյն:

Գ.

ՅԱՂԱԳՍ ԱԽՈՒՐՑ ՊԱՀՈՑ, ԵՒ ՊԱՀՈՑ

Առաքք. Կարգեցին առ աքեակը և եղին հաստատու-
գ գ թեամբ, թէ օր չորեքշաբաթի պահք եղեցին. զի ի

նմա գուշակեաց և յայտնեաց Տէրն և կենարարն զիսորհուրդ չարչարանաց իւրոց և մատնութեան, և դատաստանի և խաչելութեան և մահուան և յարութեան՝ աշակերտացն իւրոց, եւ տրտմեցան առաքեալըն, Արդ եղիցի ի պահս և ի սուզս եւ ի պաշտօն և յաղօթս ցնծութեան եւ ուրախութեան:

Դ Դ Կարգեցին առաքեալք եւ եղին հաստատութեամբ, թէ ուրբաթ եղիցի ի պահս եւ ի սուզս եւ ի տրտմութիւն: Վասն զի որ ինչ ասացաւն յաւուր չորեքշարաթի վասն չարչարանաց Փրկչին մերոյ, յուրբաթին կատարեցաւ, յորժամ շարժեցան արարածք ամենայն՝ եւ խաւարեցան լուսաւորք ի յերկինս, պահեալ լիցի մինչեւ ցիններորդ ժամն:

Ը Ը Կարգեցին առաքեալք եւ եղին հաստատութեամբ, թէ զքառասուն օր պահս կարգեցցեն, յամենայն չարութենէ, ի մեղաց եւ ի կերակրոց, յառաջ քան զօրն չարչարանաց Փրկչին մերոյ, Եւ ապա արացեն զօրն չարչարանաց, պասէք Տեառն, եւ տօն Յարութեան փրկչին: Ընթերցցին զիրք Մարդարէականք եւ Առաքելականք, օր պատմեսցեն զչարչարանացն Տեառն, եւ զգուշակումն Յարութեան Փրկչին: Քանզի եւ ինքն իսկ՝ Տէր մեր Քրիստոս, Տէր տօնից եւ տարեկանաց՝ պահեաց զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր: Նոյնպէս եւ Մովսէս ի Սինէական լերինն, ի ձեռն պահոց՝ իրեւ սիրելի եւ բարեկամ խօսէր ընդ Աստուծոյ, եւ մեծապէս պատիւ գտնեալ յերկնաւոր արքայն, ահեղ երեսօք զարցունական օրէնս եւ զկանոնս ըերեալ իջանէր առ ժողովուրդն: Նոյնպէս եւ նախանձաւորն Հեղիսա ի ձեռն քառասնօրեայ պահոց՝ մեծապէս նշանս եւ զօրութիւնս գործելով՝ ապա կառավարեալ ասպատակէր յերկինս: Եւ երկք մանկունք ի ձեռն սրբութեան պահոց, ի մահուանէ թագաւորին ապրեցան, եւ զթագաւորին ի գիտութիւն ճշմարտութեան ածին, եւ բարի անուամբ կեցեալ՝ արժանի եղեն արքայութեան Քրիստոսի:

Առաք. Եթէ ժառանդաւոր գտցի՝ զօր կիւրակէի կամ զշարաթի պահել՝ լուծցի. եւ ժողովրդական ի հածթ դդ դդ զորդութենէ որոշեցի:

Կդ Կը Եթէ ոք եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, կամ գրակարգաց եւ սաղմոսերգու զսուրբ քառասնորդս ոչ պահեսցէ, եւ զշորեքշարաթ, եւ զուրբաթ, լուծցի, Բայց եթէ վասն հիւանդութեան

- ինչ մարմնոյ խափան լինիցի, իսկ եթէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի:
- Ճ** միդ Ոչ է պարտ քրիստոնէից ի շաբաթու կամ ի կիւրակէի շաբաթանալ կամ հրէանալ.
- Կ** մլդ Նթէ ոք յաղագս ճգնութեան պահիցէ յաւուր կիւրակէի, կամ յաւուրս Պէնտէկոստէից, նզովեալ եղիցի:
- Բ.Ն.Գ.** Նթէ ոք առանց մարմնական վտանգի՝ զեկեր մլզ դեցական պահս լուծանէ նզովեալ եղիցի:
- Ճ** մհր Ոչ է պարտ զքառասնորդսն մեծի հինդշաբաթին լուծանել կամ շորակեր լինել:
- Դանդ.** Ոյք յարանց՝ պահս ինչ՝ համարեցան տրտում:
- Ժ** պծք եւ գտխուր հանդերձ ինչ ազանել, որպէս թէ այսպիսի ինչ իրօք արդարասցին, եւ դատապարտեն զայնոսիկ՝ որք ահւ եւ երկիւղիւ եւ ոչ փառասիրութեամբ զառլորական հանդերձան ազանեն, եւ դորովին այսպիսիօքս, նզովեալ լիցին:
- Նթէ ոք ի պահողաց՝ արտաքս քան զհարկ յծթ ինչ մարմնաւոր, այսինքն է ցուուց եւ վշտաց, ամբարհաճեաց եւ ամբարտաւանեաց, եւ զտուեալ եւ զկարգեալ զպահս հասարակաց. որ պահի յեկեղեցւո՞յ ելոյժ եւ արհամարհեաց՝ իրրեւ կրիցի ի նմակատարեալ միտք եւ խորհուրդք, նզովեալ է:
- Ի** յկ Նթէ ոք ի մարդկանէ կատարեալ հասակաւ առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ ունելով, զքառասուն աւուր պահսն ի դլուխ ոչ տանիցի, այնպիսին նզովեալ եղիցի:
- Ես** յկա Նթէ ոք զքառասունն պահեսցէ սրբութեամբ, եւ ի Զատկի հինդշաբաթի օրն՝ նախ քան զհաղորդին օրինաց, և բաժակին սրբելոյ, յայլ ինչ աւելի համարձակեսցի ուտել զպահսն՝ զոր պահեաց, ընդունայն լիցի եւ ի մէջ ժողովոյն նզովեալ:
- Լաւա-**
- Դէկ.**
- Խ** նլե Զի չէ պատշաճ ի քառասներորդսն հաց մատուցանել, բայց եթէ ի շաբաթու եւ ի կիւրակէի:
- Խ** նլզ Զէ արժան ի քառասներորդսն յաւագ շաբաթու հինդշաբաթի օրն՝ բերան լուծանել. զի մի ամենայն պահք քառասնորդացն անարդեսցին, այլ արժան է զամենայն քառասնորդսն պահել, եւ լոկաշտուճ հացիւ միսիթաբել զանձնս:
- Խ** նլէ Զէ մարթ եւ պատշաճ ի քառասնորդսն զմարտիրոսաց ծնունդսն եւ զտօնս առնել, այլ զուրբ մարտիրոսաց յիշատակս կատարել ի շաբաթու եւ ի կիւրակէի:

- Թաղ.,
առաք.,
իւ նղ շարաթ պահել եւ աղօթել. զի աւուրբ չարչարանաց
Տեսառն մերոյ են՝ տրտում արտասուօք յիշել զնորա
խոնարհութիւն, եւ դոհանալ զնմանէ, որ եկն եւ
փրկեաց զմեղ իւրովք չարչարանօք, պահել մին-
չեւ ցինն ժամն:
- իդ նղա Դարձեալ ասէ առաքեալն՝ յորժամ զտէրու-
նական տօնսն կատարեն հաւատացեալք, նախ յա-
ռաջ՝ պահեսցեն շարաթ մի ի պատիւ եւ ի սպաս
տօնին, եւ ապա տօնեսցեն:
- իէ նղը Դարձեալ ասէ առաքեալն՝ զսուրբ քառա-
սունսն պահեսցեն հաւատացեալք սրբութեամբ,
ուրոյն զշարաթ եւ զկիւրակէ, և յորժամ յօր չար-
չարանաց Տեսառն գայցեն՝ տգնեսցեն եւ անդադար
աղօթեսցեն, ժամի ումեք ելցէ յայն աւուրսն,
այլ արտասուս ըստ Տեսառն մերոյ. եւ ապա զկե-
նարար պասէքն արասցեն՝ ցնծալով ընդ յառնիլ
Տեսառն մերոյ. աղօթիւք փառաւորել զնա, որ փըր-
կեաց զմեղ յարութեամբ իւրով. եւ ետ մեզ երգա-
կից վերնոցն լինել:
- Ա.Յ. Հարց. — Եթէ կին ծնանիցի ի պահս սուրբ Զատ-
է շնդ կին, պարտ է պահել եւ ոչ ըմպել գինի, թէ թոյլ
տալ վասն ծննդեանն:
- Պատասխ. — Պահք վասն զմարմին խոնարհեցու-
ցանելոյ եղան, ապա եթէ մարմինն ի չարչարանս
եւ ի խոնարհութեան եւ ի տկարութեան է, պարտ
է սակափի ինչ՝ որչափ կար է բառնալ կերակուր
եւ ըմպելի:
- ը շնե Հարց. Եթէ ոք տկար իցէ կամ մաշեալ ի
բազում հիւանդութեան, եւ եկեսցեն պահք սուրբ
Զատկին, ամենայն իրօք պարտ է պահել, եթէ ար-
ձակեսցի ճաշակել ի հացէ ի գինոյ եւ ի ձիթոյ
վասն հիւանդութեան,
- Պատասխ. — Արձակել պարտ է զայնպիսին, առ-
նուկ ի կերակրոց և յըմպելեաց, որչափ կարէ բառ-
նալ. բայց յետ Պենտէկոստէին հատուսցէ,
- Բար-
ով Բ.
լա չդ Զշարաթ եւ զկիւրակէ եւ զՊէնտէկոստէն, մի
ոք իշխեսցէ ընդ պահօք արկանել՝ բաց յայսահա-
բացն եւ որ յառաջ քան զյայտնութիւնն՝ ծնունդ
առնէ՛ նզովեալ եղիցի:
- Կը շնդ Կին՝ որ ի ծնունդս վարանի յաւուրս պահոց,
վասն տկարութեան մարմնոյն՝ արժամ է ձէթ եւ
գինի տալ, եւ եթէ վախճանի՝ օրէնս:

ՃՌ ՀՅԵ Եթէ ոք ի սուրբ աղուհացսն յաղեսցի յանգէտըս, մի ամ ընդ ձեռամբ ապաշխարեսցէ, եթէ գետութեամբ՝ երեք ամ ընդ ունկնդիրս կացցէ, վարդապետն իշխան է լուծանել զկարդն:

ՆԵՐԱ. ՄԵԾ. Ի սուրբ քառասնորդաց պահս, եւ կամ յառջաջուորս նորին, մի ոք իշխանցէ լուծանել ըստ սրբոյ կանոնին. եթէ լուծեցէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց զաւուրցն կերակուր պատճառաւ հմբոց կամ գործակալաց, յեկեղեցի մի՛ իշխանցէ մուանել. մինչեւ տուժեսցէ աղքատաց ապաշխարութեամբ:

ԷՅ ՈԺԴ Արդ՝ զպատուիրեալս ձեզ առ ի մէնջ, փութապէս կատարել ահիւն Աստուծոյ, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն, եւ պատուիրեցաւ ձեզ՝ յամենայն ամուեան պարապել խնդրուածոց, զաւուրչաբթի միոյ խնդրել յԱստուծոյ՝ զմարմնոյ առողջութիւն եւ զոգույ փրկութիւն:

ՆԵՐԱ. ԽԱՐ Վասն որ ի բեմի պահս քարոզեն, որ ոք լուխը ոծոց ծանէ աւանց մարմնաւոր հիւանդութեան, նզուին եղիցի:

ԽԱԲԻՔ. Առ. հարցումն թէողոս քահանայի եկեղեցւոյն կեսարու: —Կամիմ ասել յաղագս քառասնիցն պահոց, թէ որպէս Մովսէս քառասուն օր պահեաց, եւ Եղիա եւ Տէրն. եւ մեր ոչ ի թիւ արկեալ՝ այնպէս քառասուն օր, այլ զշաբաթ և զկիւրակէ լուծանեն ամենայն ախորժելի կերակրօք եւ զինեալ բայց միայն ի մաոյ. եւ ոմանք յերեք ժամուն ուստեն՝ ըստ այլ աւուրցն, եւ ընդ պահօք արկանեն, որ լինի ըստ նոցա քառասուն եւ ինն: —Մովսէս պահեաց զքառասուն տիւ եւ զքառասուն զիշեր, նոյնպէս եւ Եղիա, եւ Տէրն մեր զնոյն ճմարտեաց, զնոցայն քառասնօրեայ պահս անսուաղապէս: Խակ մեզ վերջնոց՝ ըստ տկարութեան մերոյ, օրինադրեցին զցերեկապահութիւն, աղյու եւ հացիւ, և որ ի նոյն յարմարին պարկեշտիցն սեղանք, զաւելորդ կրւն ըստ մերոյ տկարութիւն. բայց ոչ վափիկութիւնն մարմնոյ, եւ լինի քսուասուն օր պահքն, եւ շաբաթ եւ կիւրակէ՝ քառասուն եւ ինն օր, ըստ քաղաքացն ապաստանի Մովսիսեան օրինադրութեան, որ զմահապարտսն ժողովէը մինչեւ ցվախնան քահանայութեանց, եւ ապա արձակեալ լինէր ի մի մահուանէն: —Նոյնպէս եւ աստ քառասուն ինն օր պահք ի մահուան Քահանայապետին Քրիստոսի, թողութեան առիթ մեղուցելոցն լինի փրկա-

կան պատարագաւն հաւատացելոց, եւ ապաշխարողաց յայսմ քառասուն եւ ինն աւուրս. զի թէ-պէտ եւ սուրբ հարք՝ յաղագս յիշատակի սրբոց եւ Քրիստոսի պատարագին՝ զարաթ և զկիւրակէ լուծեն յերրորդ ժամու ի կերակուրս, այլ ոչ յաւելով ի կերակուր կամ ի դինի զմեզ թողացուցին, այլ ի պարկեշտութիւն. որպէս բերանն Քրիստոսի Պօղոս օրինադրէ, լաւ է շնորհօք հաստատել զսիրտս, և ոչ կերակրօք և ըմպեկեօք. զի ոչինչ օդտեցան որ այնպէսն գնացին, և ոչ պահեցին պահս: — Վասն այսորիկ և նզովս եղին՝ որք զյդփութիւն՝ օրէնս վարկանէին. — Առաջին սուրբ հարք զչորեքշարաթ և զուրբաթ և զուխտի շաբաթն, զՎարդավառին և զԱստուածածնին զՍրբոյ Խաչին և զՅայտնութեան շաբաթն, և զառաջաւորսն, ընդ սմա համեմատեցին ի պահս պնդութեան. ևս առաւել ի վերայ այնոցիկ եկեսցեն շնորհքն Աստուծոյ, որ զերիս յիսունսն պահեսցեն յանուն սուրբ Երրորդութեան,

զԶատիկն և զՎարդավառին և զՅայտնութեանըն, և ի փրկութեան Տեառն առցեն զաւետիսն, և որք լուծանեն զԱռաջաւորսն և զաղուհացսն և զուխտիցն և զՎարդավառին և զուրբ Աստուածածնին և զսրբոյ Խաչին և զՅայտնութեան շաբաթն, և զչորեքշարաթ և զուրբաթ, նզովեսցին ի սրբոց հարցն. եթէ ակամայ լուծցեն՝ միոյն՝ քառասուն օր պահեսցեն. եւ եթէ կամաւ երեք ամ արտաքոյ ե-կեղեցւոյ եւ օրինաց կացցեն, եւ ապա հաղորդես-ցին, այսպէս կանոնեաց սուրբ այրն Աստուծոյ Եփի-փան, եթէ պահը Աստուածայայտնութեան՝ ապտշ-խարողաց և կրօնաւորաց եւ քահանայից քառասուն օր պահք սահմանեցին. — Խոկ աշխարհականաց ութօր, բայց պարտ է զութօրեայ պահոց զշաբաթ եւ զկիւրակէ զզուշութեամբ պահել. վասն զի ինքն Աստուածայայտնութիւնն ոչ լուծանի, այլ լուծանէ զչորեքշարաթ եւ զուրբաթ. նոյնպէս եւ զկիւրակէն ծոմացուցանէ: Եւ ամենայն տօնք մարտիրոսաց անխտիր կատարեսցին:

Յոյշ:
Եմաս:

է ոճզ

Այլ վասն պահելոյ եւ լուծանելայ զշաբաթ եւ զկիւրակէ ի սուրբ քառասուներրորդսն պահոց, այս յիւրաքանչիւր կամս թողեալ լիցի, միայն գոհանա-լով զԱստուծոյ՝ առանց խղճի եւ հակառակութեան, եւ առանց բանբասելոյ զընկերն, զոր կամեսցի եւ արասցէ հանդերձ պարկեշտութեամբ, երկոքին ըն-

դունելի են Աստուծոյ, եւ յաւանդութենէ եկեղեց-
ւոյ Քրիստոպի:

Եփը. Ոքք ճաշակեցին ի մոռացութենէ ի մսոյ, ի
բ ռմխա չորեքշաբաթի կամ յուրբաթի, որոշեցին յեկեղեց-
ւոյ, երեք շաբաթ պահելով սրբութեամբ՝ եւ տրօք
տնանկաց և պատարագօք, ժ. կրկին գան արցեն. և ապա հաղորդեսցին.—իսկ եթէ ամբարտաւանու-
թեամբ արհամարհեսցեն զառաքելական հրամանն,
Գ. ամ ապաշխարեսցեն. Խ. կրկին գան արցեն,
եւ Լ. դրամ առոգանս տացեն յեկեղեցին, եւ յա-
ւուրն յորում պղծեցաւ, զնա սրբութեամբ պահեսցէ
ցման իւր. եւ ապա հաղորդեսցի օրինաց:—Ապա
եթէ ազատ ոք է և ոչ առնու յանձն զապաշխար-
ութիւն եւ զկարգ, Ծ. դրամ առոգանս տացէ յե-
կեղեցին, եւ Զ. դրամ յաղքատս. եւ ապա հաղոր-
դեսցի օրինաց:

Գ ռմխը Իսկ եթէ քահանայ դիմեսցի ի նոյն չարիս,
մի պաշտեսցէ զքահանայութիւն, այլ Ե. ամն ա-
պաշխարեսցէ, ապա հրամանաւ եպիսկոպոսին պաշ-
տեսցէ զքահանանայութիւն:

Գ ռմխե Պահք Աստուածայայտնութեան՝ կարգեցան
կրօնաւորաց, այրեաց եւ ապաշխարողաց Ծ. օր
իսկ աշխարհականաց ութօրեայ. եւ զկիւրակէն,
այլ որպէս Աստուածայայտնութիւն՝ ինքն ոչ լու-
ծանէ զառաքելական հրամանն, նոյնպէս եւ զկիւ-
րակէն ծոմացուցանէ. վասն զի լուծանէ զչորեքա-
րաթ և զուրբաթ:

Սեօնի

Հայոց Կաթո.

Եւ որ ի չորեքշաբաթի եւ յուրբաթի միս ու-
թէ յառաջ տէ յառաջ քան զաղուհացսն մի շրաբթ պահեսցէ:

Յովիկ, Յնդ.

Վասն սրբոյ պասեքին պահոցն ի կանոնս ի
շաբաթու ոչ հրամայի պահել, եւ յայտ անտի է.
ա ոյժու զի շաբաթի յերեկոյին՝ ապաշխարութիւն քարոզի.
ի մի դէմսն ըստ Մովսիսի օրինադրին հրամանի
պարտիմք պատուել. եւ միւս՝ զի կարապետ է մե-
ծի թագաւորին յատաջընթաց՝ ընդառաջ ելանէ՝
ճրագօք եւ մոմեղինօք՝ կիւրակէին:

Բ ոյժէ Այլ վասն կիւրակէի պահելոյ՝ ոչ կանոնք հրա-
մայեն եւ ոչ վարդապետք. այլ նզովեն եւ անէծս
ի վերայ դնեն. զնոյն եւ յժը. Հայրապետք ի նի-
կիոյ ս. ժողովն նզովս կարգեցին եւ կնքեցին: